

ձեւակերպել եւ կատարելագործել է Դանիէլ եպիսկոպոսի գործածած — եւ ո՛չ նրա դտած — այբուբենը: Այլ խօսքով՝ Մաշթոց նորագիւտ այբուբենի հիմքում դրել է Դանիէլեան նշանագրերը, որ դարձեալ հայկական են եղած, բայց՝ անկատար:

«Դանիէլը իր այբուբենով բաւական երկար ժամանակ հայերէն է գրելիս եղել, ուրեմն նաեւ, ամենայն հաւանականութեամբ, թարգմանութիւններ է արել այդ լեզուով»: Միայն թէ այդ մասին դժբախտաբար, ոեւէ հետք չէ մնացել եւ կամ դեռ չէ դանուած նման հետք»: Եթէ, շարունակում է Մարքիարտ, Մեսրոպ Մաշթոց (հակառակ Դանիէլի) իր գիւտի հիմքում դրած լինէր յունական այբուբէնը, անմիջապէս աչքի պիտի զարնէր այդ բանը՝ հայերէն երկաթագրերի (սկզբնական նշանների վրայ մի հայեացք իսկ նետելով, ինչ որ գոյութիւն չունի:

Իսկ ո՞վ էր Դանիէլ, եւ ի՞նչ էին, իսկապէս, «Դանիէլեան» նշանագրերը:

Հայ պատմիչները դժբախտաբար շատ ժրլատ են՝ այդ մասին լրիւ տեղեկութիւններ տալու խնդրում: Նրանք բացի վերեւ առաջ բերուած տեղեկութիւնից, այն են ասում միայն, որ Դանիէլը ասորի եպիսկոպոս է եղած, իսկ թէ ո՛ւր է գտնուել նրա աթոռը — ոչինչ: Մարքիարտ, հիմնուելով մի քանի փաստերի վրայ, Աղձնիքն է (Սասուն եւ շրջակայքը) համարում Դանիէլի գործունէութեան շրջանը, այդ եպիսկոպոսին նոյնացնելով ընդհանուր եկեղեցական պատմութեան աղբիւրների մէջ յիշատակուող մի համանուն չեպիսկոպոսի հետ:

Աղձնիքը յայտնի է, սահմանակից էր Ասորիքին: (Այս վերջին անունն տակ քրիստոնէական շրջանին հասկացուած էր հիւսիսային Միջագետքը — Ուռհա կամ Եգիպտոս եւն. — և ոչ թէ այսօրուան Միւրիան, չխօսելով արդէն Ասորեստանի մասին): Այլ խօսքով՝ Աղձնիքը Հայաստանի բոլորտարածքի մէկն էր, ուրեմն՝ սահմանամերձ նահանգ. Աղձնիքը զուտ հայաբնակ շրջան չէր, նա ունէր շատ ասորի բնակիչներ եւս: Դանիէլն էլ, լինելով ազգով ասորի, բայց հովիւ նաեւ քրիստոնեայ հայութեան, իր քարոզութեանց ընթացքին զգացել է հայերէն գրերի կարիքը, որ գտել է նա,

կամ ձեռք է բերել արդէն եղածը ու գործածել իր առաքելական նպատակների համար:

Իսկ թէ ո՞վ է եղել, որոշապէս «Դանիէլեան» գրերի, այսինքն՝ Դանիէլի գործածած գրերի գիւտի հեղինակը՝ ինքը Դանիէլը, թէ՞ այլ ոք նրանից առաջ, այդ մասին ոչինչ չեն հաղորդում մեր պատմական աղբիւրները: Յամենայն դէպս, ասում է Մարքիարտը, այդ անձը հայ չպիտի եղած լինի, այլ՝ ասորի, «այլապէս անբացատրելի պիտի մնար այն հարցը, թէ այդ այբուբենը Հայաստանում ի՞նչպէս կարող էր բոլորովին անյայտ մնացած լինել»:

Նոյն Աղձնիք նահանգի մաս կազմող Խոյթ եւ Սասուն գաւառների բնակիչները դեռ յետադայ տարիներում էլ, ինչպէս հաղորդում է Թոմաս Արծրունին, գործածելիս են եղել Մաղմոսի՝ սովորականից տարբեր, հին վարդապետների ձեռքով պատրաստուած մի այլ թարգմանութիւն: Եւ որովհետեւ հայերէն սկզբնական այբուբենի հեղինակը ասորի է եղած, ասում է Մ., ապա ուրեմն հասկանալի է, որ նա օգտուած պիտի լինի նաեւ ասորերէն նշանագրերից:

Մարքիարտ այնուհետեւ, հիմնուելով հնագրական եւ այլ տուեալների վրայ, աւելի կամ պակաս հաւանական ենթադրութեամբ սահմանում է, թէ մեսրոպեան այբուբենի ո՛ր գրերը ասորական նախատիպից են ծագում, որո՞նք՝ յունական եւ կամ պարսկական նախատիպերից: Մի քանի նշանագրերի ծագումն էլ բոլորովին մուտ է մնում գիտնական հեղինակի համար: «Հաւանօրէն երբեք կարելի չպիտի լինի որոշակի սահմանել, թէ հայերէն այբուբենի մէջ ի՞նչ բաժին ունին մի կողմից Դանիէլը կամ նրա նախորդը, եւ միւս կողմից Մաշթոց եւ նրա զեղազիր Հոռփանոսը»:

Այսպէս կամ այնպէս իր կատարած քննական վերլուծումներից Մարքիարտ այն եզրակացութիւնն է հանում, թէ Դանիէլի այբուբենը պէտք է որ դէպի ձախ գրուող բաղաձայն տառերից բաղկացած լինէր: Եւ դա նոյնը չէր, ինչ որ ժամանակի արամէական կամ իրանեանարամէական (այդպէս կոչուած պահլաւի) այբուբենը, այլ բաղկացած՝ տարբեր — տարբեր, նաեւ աւելի հին այբուբեններից փոխ առնուած նշանագրերից: Ինչ որ բոլորովին պարզ է հա-